

**Բարթոլդն ընդդեմ Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետության (Barthold v. Federal Republic of Germany), Application No. 8734/79 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)**

Թեմա՝ լրատվամիջոցների գործունեության կարգավորում, ընդհանուր հարցեր, այլ բովանդակային սահմանափակումներ  
Ենթաթեմաներ՝ գրաքննություն, առգրավումներ և կասեցումներ, առևտրային խոսք, զբաղվածություն և խոսքի ազատություն  
Թեսթ՝ անհրաժեշտություն  
Սանկցիա՝ կասեցում  
Որոշում՝ խոսքի ազատության իրավունքի խախտում – հինգը երկու ձայնի հարաբերությամբ  
Ընդդատություն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետություն:

**Փաստական հանգամանքներ**

Դիմումատուն, հանդիսանալով կենդանիների վիրաբույժ, թերթում հոդվածում քննարկել է գիշերային ժամերին կենդանիների վիրահատական ծառայությունների բացակայության հարցը: Նա նշել է մի դեպքի մասին, երբ մինչև իրեն դիմելը չափազանց հիվանդ կատվի տերերը ապարդյուն փորձել էին կապվել անասնաբուժական երկու ծառայությունների, ինչպես նաև շտապ օգնության ծառայությունների հետ: Հոդվածը շարունակել էր քննարկել գիշերային ժամերին կենդանիների վիրահատական օգնության պատշաճ ծառայությունների բացակայության հարցը և հրապարակել էր դիմումատուի նկարը: Կենդանիների վիրահատական օգնություն տրամադրող մի շարք այլ ծառայություններ հոդվածը գնահատել էին անարդար և մասնագիտական էթիկայի կանոններին հակասող, ինչը հանգեցրել էր անարդար մրցակցության: Վերջիններս հայց էին ներկայացրել ներպետական դատարան: Դատարանը որոշվել էր արգելել դիմումատուին առնչություն ունենալ լրագրողների հետ և իր կարծիքը համեմել իր աշխատանքային փորձից բերված օրինակներով: Դիմումատուն գործը բողոքարկել էր վերաքննիչ դատարան, որը, սակայն, ուժի մեջ էր թողել առաջին աստիճանի դատարանի որոշումը:

**ՄԻԵԴ-ի եզրակացությունը**

Կիրառված արգելքը հանդիսացել է միջամտություն խոսքի ազատության իրավունքի նկատմամբ: Դատարանը գտել է, որ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և ունեցել է այլոց իրավունքները պաշտպանելու իրավունք:

Դատարանի կողմից ուսումնասիրվել է այն հարցը, թե արդյոք արգելքը «անհրաժեշտ է եղել արդյոք ժողովրդավարական հասարակությունում»:

**Անհրաժեշտությունը**

ՄԻԵԴ-ը վկայակոչել է, որ.

«Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին մասով, ժողովրդավարական հասարակության էական հիմնասյուններից է եւ նրա առաջընթացի, ինչպէս նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւտրման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլեւ այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»»:

«Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պայմանը պահանջում է Դատարանից որոշել, թե արդյո՞ք գանգատի առարկա միջամտությունը բխում է «ճնշող հասարակական կարիքից», արդյո՞ք այն համաչափ է իր առջեւ դրված «օրինական նպատակին», եւ արդյո՞ք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով ներկայացված պատճառները «վերաբերելի են եւ բավարար»: Այդպիսի կարիքի առկայությունը և դրա հետ կապված միջոցառումների հարցը որոշելու համար իշխանություններին տրված է հայեցողության որոշակի լուսանցք:

Իր վերահսկողական դերն իրականացնելիս ՄԻԵԴ-ը նպատակ չունի զբաղեցնել իրավասու ներպետական մարմինների տեղը. այն լոկ վերանայում է նրանց կողմից ընդունված որոշումները: Դա չի նշանակում, որ վերահսկողությունը սահմանափակված է հավաստիանալու միայն, որ պատասխանող պետությունն իր հայողեցությունն իրականացնում է ողջամիտ կերպով, նրբանկատորեն և բարեխղճորեն: ՄԻԵԴ-ը պետք է միջամտությունը դիտարկի գործի բոլոր հանգամանքերը համադրելով և որոշի, թե արդյոք այն «համաչափ է եղել օրինական նպատակին» և արդյոք միջամտությունը հիմնավորելու նպատակով ազգային մարմինների ներկայացրած պատճառներն «վերաբերելի են և բավարար»: (55-րդ պարբերություն)

Նշված գործով ՄԻԵԴ-ը գտավ, որ արգելքը սահմանափակել էր դիմումատուի իրավունքները, քանի որ այն արգելք էր հանդիսացել դիմումատուի կողմից որևէ կարծիք արտահայտելու Համբուրգում գիշերային ժամերին կենդանիների վիրահատական ծառայությունների մասին: Դիմումատուն զրկված էր նաև իր անունը, լուսանկարը հրապարակելու և իր զբաղմունքն ու մասնագիտությունը ներկայացնելու իրավունքից: Միջամտության արդյունքում դիմումատուն զրկվել էր հանրային հետաքրքրություն ունեցող թեմայով քննարկմանը մասնակցելու իրավունքից, իսկ մամուլն էլ զրկվել էր տեղեկատվություն ներկայացնելու և հանրային հսկողի դեր կատարելու իր գործառնություններից: Այդ իսկ պատճառով, արգելքը համաչափ չէր օրինական նպատակին և հետևաբար անհրաժեշտ չէր «ժողովրդավարական հասարակությունում» «այլոց իրավունքները պաշտպանելու համար»: